ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՋԵՎ ԽՍՀՄ ՆԱԽԿԻՆ ՊԵՏԲԱՆԿԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՍԻՎՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

ԽՍՀՄ նախկին Պետական բանկի ակտիվների եւ պասիվների բաժանման համար Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների կենտրոնական (ազգային) բանկերը, համաձայն սահմանադրական ընթացակարգերի, մեկամսյա ժամկետում ստեղծում են Համատեղ հանձնաժողով: Ռուսաստանի կենտրոնական բանկը վերոհիշյալ Հանձնաժողովին ծանոթացնելու եւ աշխատանքի համար տրամադրում է լուծարման հանձնաժողովի բոլոր անհրաժեշտ նյութերը, ներառյալ ԽՍՀՄ Պետական բանկի համախմբված բալանսը՝ 1992 թվականի հունվարի 1-ի դրությամբ:

ՀՈԴՎԱԾ 2

Ստեղծված Հանձնաժողովը, մեկամսյա ժամկետում, մշակում է ակտիվների եւ պասիվների բաժանման մեխանիզմը՝ 1992 թվականի հունվարի 1-ի դրությամբ եւ այն ներկայացնում պետությունների ղեկավարների քննարկմանը:

ՀՈԴՎԱԾ 3

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կատարված է Կիեւ քաղաքում 1992 թվականի մարտի 20-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվներում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին կուղարկի Համաձայնագրի հաստատված պատճենները:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի մարտի 20-ից: